ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

VLADIMIR HARUTYUNYAN
TIGRAN HARUTYUNYAN

TAX TYPES AND THEIR CLASSIFICATION

Key words: *Taxes, tax efficiency, direct taxes, indirect taxes, tax policy, income tax. profit tax, excise tax*

The article analyzed the peculiarities of tax classification, as well as types and types of taxes. In addition, it has been confirmed that the effective tax policy could facilitate economic activity by applying the incentive and fair functions of taxes.

ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ՎԱՐՍԻԿ ՏԻԳՐԱՆՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ, ՀՊՏՀ

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հիմնաբառեր. *ինտեգրման գործընթացներ, համախառն խնայողություններ, ներքին ներդրումներ, օտարերկրյա ուղղակի ներդրումներ, վերազգային կորպորացիաներ, բարձր արդյունավետություն, քիմիական արդյունաբերություն*

Հայաստանը՝ որպես փոքր բաց տնտեսություն ունեցող երկիր, բավական մեծ կախվածություն ունի համաշխարհային տնտեսությունից: ՀՀ-ում ներդրումների ֆինանսավորման հատկապես ներքին աղբյուրները չափազանց սահմանափակ են: Այս իմաստով, ժամանակակից տնտեսությունների միջև շուկաների բաժանման և վերաբաժանման շնորհիվ ձևավորվող տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային նոր տիպի հարաբերությունները նախադրյալներ են ստեղծում ինտեգրացիոն նոր միավորումների համար: Կարծում ենք՝ լրացուցիչ ներդրումների ներգրավման նպատակով ՀՀ տնտեսության համար կիրառելի են վերազգային կորպորացիաների հետ ինտեգրման հնարավորությունները մի շարք ոլորտներում, այդ թվում՝ քիմիական արդյունաբերության մեջ:

Ժամանակակից տնտեսությունների միջև, շուկաների բաժանման և վերաբաժանման շնորհիվ, ձևավորվում են տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային նոր տիպի հարաբերություններ՝ նախադրյալներ ստեղծելով ինտեգրացիոն միավորումների բազմազանեցման համար: Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացների

զարգացումը մեծապես պայմանավորված է երկրների բնաաշխարհագրական, տնտեսական զարգացվածության և գիտատեխնիկական մակարդակների տարբերություններով, ինչպես նաև արտաքին կապերի, կենցաղավարման ձևերով ու բնույթով, նաև վերազգային կորպորացիաների տնտեսական էքսպանսիայով: Արդյունքում, երկրների տնտեսական զարգացումն էլ մեծապես պայմանավորվում է ինտեգրման գործընթացներով, որոնք ենթադրում են արտադրողական ուժերի, արտադրության միջոցների, տեխնոլոգիական գիտելիքի և աշխատուժի միջազգային փոխանակումներ, մասնագիտացում և կոոպերացում, ֆինանսների, արտադրական ռեսուրսների, առևտրի և ծառայությունների միջազգային տեղաշարժեր, գլոբալ հիմնախնդիրների (բնապահպանություն, Համաշխարհային օվկիանոսի և տիեզերքի յուրացում, զարգացող, աղքատ երկրներին օգնություն) լուծումներ:

Այս համատեքստում ազգային տնտեսությունները դառնում են համաշխարհայինի բաղկացուցիչ մաս, սակայն տնտեսական իրավիճակը կառավարող ինստիտուտները մնում են որպես ազգային: Հայաստանը, իբրև փոքր բաց տնտեսություն ունեցող երկիր, բավական մեծ կախվածություն ունի համաշխարհային տնտեսությունից: Ուստի ՀՀ-ի համար արտաքին շուկաներ ներթափանցելու ժամանակակից ձևերը կարող են ընդունելի լինել և արդյունավետ կիրառվելու դեպքում, ելնելով ՀՀ և տարածաշրջանային տնտեսական, քաղաքական, ազգային առանձնահատկություններից, մեծապես պայամանավորել ՀՀ ազգային անվտանգությունը:

Նշենք, որ ՀՀ փոքր տարողությամբ շուկան սահմանափակում է ներքին ընկերությունների ներդրումներ կատարելու հնարավորությունները: Խիստ սահմանափակ են ներդրումների ֆինանսավորման ներքին աղբյուրները՝ ձեռնարկությունների սեփական միջոցներ, ֆինանսական շուկայի միջոցներ, բյուջետային ներդրումային ֆինանսավորում, համախառն խնայողություններ: Ի վերջո, քանի որ պետական բյուջեն մշտապես պակասուրդով է, Հայաստանում պետական խնայողություններ չկան: Ազգային խնայողությունները ձևավորվում են բացառապես մասնավոր խնայողությունների հաշվին: Ավելին, բյուջեում նախատեսվող պետական ներդրումները ևս իրականացվում են մասնավոր խնայողությունների հաշվին:

ՀՀ-ում ներքին ներդրումների հիմնական աղբյուր հանդիսացող համախառն խնայողությունները ճգնաժամային՝ 2009 թ. 2008 թ. համեմատ կրճատվել են 51.5%-ով և որոշակի տատանումներով շարունակել են ցածր մնալ մինչև 2014 թ. (գծապատկեր 1): Սակայն, 2015 թ. 2014 թ. համեմատ էական աճ է արձանագրվել՝ 42.7%: Այնուամենայնիվ, համախառն խնայողությունները 2015 թ. ծավալային արտահայտությամբ ցածր են դեռևս 2008 թ. ցուցանիշից 18.8%-ով:

Դիտարկվող ժամանակահատվածում համախառն ներդրումները (կուտակում) նույնպես կրճատվել են՝ 2009 թ. կազմելով 2008 թ. մակարդակի 74.7%-ը, և որոշակի տատանումներով մինչ օրս շարունակում են ցածր մնալ: 2016 թ. ներդրումները կազմել են 934.7 մլրդ ՀՀ դրամ, այսինքն՝ դեռևս ցածր են նախաճգնաժամային՝ 2008 թ. մակարդակից

35.9%-ով: Նշենք նաև, որ դրանք 10.5%-ով կրճատվել են նաև 2015 թ. համեմատ: 2016 թ. ներդրումներ/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 18.4%՝ 2015 թ. 20.7% փոխարեն:



Գծապատկեր 1. ***ՀՀ ներդրումների և համախառն խնայողությունների զարգացման միտումները 2008–2016 թթ.***[1]

Դիտարկենք նաև համախառն խնայողությունների կշիռը ՀՀ ներդրումներում: 2008 թ. այն կազմել է 78.3%: Ճգնաժամային՝ 2009 թ. համախառն խնայողությունների կշիռը ՀՀ ներդրումներում կտրուկ նվազել է՝ մինչև 50%, որն ըստ էության շարունակվել է մինչև 2014 թ.: 2015 թ. համախառն խնայողությունների կշիռը ՀՀ ներդրումներում կազմել է 88.6 %: Թեպետ և՛ ներդրումները, և՛ համախառն խնայողությունները 2015 թ. ծավալային արտահայտությամբ ցածր են 2008 թ.-ի մակարդակից, այնուամենայնիվ 2015 թ. խնայողությունների տեսակարար կշիռը ՀՀ ներդրումներում գերազանցել է 2008 թ. մակարդակը 10.3 տոկոսային կետով: Կարելի է ասել, որ 2015 թ. նույնիսկ կրճատված ներդրումների ավելի մեծ բաժինն է ֆինանսավորվել ազգային (կարելի է ասել՝ մասնավոր) խնայողություններով:

[1] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգրքեր, http://minfin.am, ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ (եռամսյակային):Համախառն խնայողությունների վերաբերյալ ՀՀ ԱՎԾ վերջին տվյալները վերաբերում են 2015 թ.:

Ներդրումների և խնայողությունների տատանողական վարքագծի պայմաններում, բնականաբար, զարգացող երկրների համար չափազանց կարևոր են ներդրումների ֆինանսավորման արտաքին աղբյուրները՝ օտարերկրյա ներդրումներ, վարկեր, փոխառություններ:

Օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ) կարող են համալրել ներքին ռեսուրսները՝ ընդլայնելով արտադրական հնարավորություններն ու շուկաները: ՀՀ-ում ՕՈՒՆ/ՀՆԱ հարաբերակցությունը 2012–2015 թթ. կազմել է 2.8%, մինչդեռ 2005–2008 թթ.՝ 6.6%: Նշենք, որ, ըստ Համաշխարհային բանկի 2017 թ. հունիսի համակարգված գնահատման, Հայաստանը կարող է գրավել ՕՈՒՆ փնտրող շուկաների զգալի հետաքրքրվածությունը հատկապես ԵԱՏՄ-ում, քանի որ վերջինիս անդամ մյուս երկրների համեմատ այստեղ ներդրումային միջավայրն ավելի գրավիչ է:

Նշենք, որ գլոբալ մրցունակության համաթվով ՀՀ-ն բարելավել է դիրքերը՝ 2009-2010 թթ. 97-րդ տեղից 2016–2017 թթ. հասնելով 79-րդին[1]: ՀՀ գլոբալ կապակցվածության խորացման համար, արտահանելի ապրանքների և ծառայությունների մասով, ներուժ ունեն թեթև արդյունաբերության, ՏՏ, զբոսաշրջության ոլորտները, որոնք կարող են բարձր արտադրողականություն և մրցունակ ապրանքներ ու ծառայություններ ապահովել և դրանով գրավիչ լինել ՕՈՒՆ-երի համար:

Նկատի ունենանք, որ ներկայում՝ վերազգային կորպորացիաների միջոցով կապիտալի կենտրոնացման պայմաններում, լայն տարածում է գտել միջազգային արտադրությունը, որը նպաստում է տնտեսական և սոցիալական մի շարք դրական փոփոխությունների[2]: Վերազգային կորպորացիաների ժամանակակից գործելաոճը ընդունող երկրներում հանգեցնում է գիտատեխնիկական առաջընթացի, ապրանքների և ծառայությունների որակական փոփոխությունների, արտադրողականության բարձրացման, կառավարման մեթոդների կատարելագործման, ազգային եկամտի, համախառն ազգային արդյունքի մեծացման, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծման:

ՀՀ փոքր տարողությամբ ներքին շուկան և դրա անկատարությունը, փակ սահմանները, տրանսպորտային մեծ ծախսերը սահմանափակում են ներքին արտադրողի հնարավորությունները, մինչդեռ այդ սահմանափակումները հեշտությամբ կարող են հաղթահարել վերազգային կորպորացիաները:

Ժամանակակից վերազգային կորպորացիայի մոդելը ձևավորվել է 1960-ական թվականներին՝ ըստ որի դրանք դուրս են եկել առանձին ազգային տնտեսությունների տնտեսական տարածքներից՝ օգտագործելով իրենց մասնավոր կապիտալը: 2016 թ. վերազգային կորպորացիաների աշխարհագրությունը ներկայացված է 63 երկրի միջոցով:

---

[1] World bank group, Հայաստան. Երկրի համակարգված գնահատում «Ապագայի Հայաստանը», Հիմնական բացահայտումներ, 2017 թ. հունիս, էջ 19-21, 30:

[2] Վերազգային կորպորացիաները մասնաճյուղեր պետք է ունենան երկու կամ ավելի երկրներում, արտաքին ակտիվները պետք է կազմեն ընդհանուրի 25-30%-ը: Կարող են հանդես գալ տարբեր ձևերով. արտադրական, հեռահաղորդակցման, ապահովագրական, աուդիտորական ընկերություններ, ինչպես նաև վերազգային բանկեր, ներդրումային և կենսաթոշակային ֆոնդեր: Ընկերությունների գլխամասային գրասենյակը գտնվում է ծագման երկրում, իսկ ընդունող երկրներում տեղակայված է դրանց սեփականությունը:

Դրանց թվով առաջին տեղում ԱՄՆ-է՝ 587, երկրորդում Ճապոնիան՝ 219, իսկ երրորդում՝ Չինաստանը՝ 200[1]: 2017 թ. մարտ ամսվա դրությամբ վերազգային կորպորացիաների աշխարհագրությունը ներկայացված է 58 երկրի միջոցով: Առաջին տեղում ԱՄՆ-է՝ 565, երկրորդ տեղում՝ Չինաստանը՝ 263 ընկերություն[2]:

Վերազգային կորպորացիաները, օգտագործելով ընդունող երկրի առավել էժան կամ առավել որակյալ տնտեսական ռեսուրսները, գիտատեխնիկական ներուժը, սեփական արտադրական հնարավորություններն ու ֆինանսական ռեսուրսները, արտադրության մեծ ծավալներով պայմանավորված բարձր տնտեսական արդյունավետությունը, կարող են դրական ազդեցություն ունենալ ընդունող երկրի մակրոտնտեսական իրավիճակի վրա: Նշենք նաև, որ ճգնաժամային իրավիճակներում, ֆինանսական կայունության շնորհիվ, այս կորպորացիաները կարող են լինել առավել ճկուն և դիմացկուն:

Այնուամենայնիվ ներկայում, ազգային տնտեսությունների տնտեսական զարգացման և ընդունող երկրների անվտանգության վրա վերազգային կորպորացիաների ազդեցության առումով, տարակարծություններ կան: Մի կողմից՝ դրանք համարվում են տնտեսության հիմնական կառուցվածքային տարր, առաջատար ուժ, մյուս կողմից՝ տվյալ երկրի տնտեսական գործընթացները կապվում են գործող վերազգային կորպորացիաների շահերի պաշտպանության սեփական շարժառիթների հետ[3]:

Կարծում ենք՝ ի լրումն վերը նշված ոլորտների, ՀՀ տնտեսության համար կիրառելի են վերազգային կորպորացիաների հնարավորությունները նաև քիմիական արդյունաբերության մեջ: Երբեմնի հզոր ոլորտը ներկայիս բարդ արտաքին հարաբերություններում կարող է արագ ոտքի կանգնել նման կորպորացիաների խոշոր ներդրումների և ունեցած շուկաների հաշվին: Հատկապես այս ոլորտի վերագործարկումը կապահովի ՀՀ աշխատաշուկայում աշխատանքային «մոռացված» հմտությունների նկատմամբ պահանջարկ և կնպաստի գործազրկության մակարդակի կրճատմանը: Եթե ընդունենք, որ միջազգային չափանիշներով աշխատունակ է համարվում 15–75 տարեկան բնակչությունը, ապա կարող ենք ասել, որ ՀՀ-ում այս ոլորտում կարող են աշխատանք գտնել նաև ՀՀ-ի համար աշխատանքային միջին տարիքից՝ 43-ից (2015 թ.), բարձր տարիք ունեցողները, ինչը կմեղմի աշխատանքի շուկայի լարվածությունը[4]: Այսինքն՝ ՀՀ քիմիական արդյունաբերության ոլորտում առկա աշխատուժն ու կապիտալը փոխանցելով բարձր արտադրողականություն ունեցող կորպորացիաներին, կարելի է բարելավել այս ոլորտի արդյունավետությունը:

Արդյունքում, արդարացված կդառնա գործունեությունը գլոբալ մասշտաբներում: Ի դեպ, քիմիական արդյունաբերության ոլորտում գործող արտադրական վերազգային կոր-

---

[1] http://www.forbes.ru/rating-photogallery/321313-reiting-krupneishikh-publichnykh-kompanii-mira-forbes:

[2] https://ain.ua/2017/05/25/krupnejshie-kompanii-mira-rejting-forbes:

[3] https://moluch.ru/archive/145/40719/, Адам Ш.М., Место и роль транснациональных корпораций в современной мировой экономике // Молодой ученый. 2017, №11, с. 183–186.

[4] World bank group, Հայաստան. Երկրի համակարգված գնահատում, «Ապագայի Հայաստանը», Հիմնական բացահայտումներ, 2017թ. հունիս, էջ 36:

պորացիաներն այնքան էլ շատ չեն[1]: Այստեղ հիմնական դերակատարում ունեն «DuPont», «Dow Chemical» և «Basf» գերհզոր ընկերությունները:

Այնուամենայնիվ, վերազգային կորպորացիաների մասնակցության ակտիվացման գործում կարևորվում է պետության դերակատարումը՝ համապատասխան ինստիտուտների կայացմամբ և ենթակառուցվածքների ձևավորմամբ: Կարծում ենք՝ ՀՀ կառավարությունը պետք է ուշադրությունը կենտրոնացնի ոչ միայն առանձին պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ շփումների վրա, այլև անմիջական բանակցություններ վարի որոշակի ոլորտներում գործող վերազգային կորպորոցիաների հետ՝ նրանց հետաքրքրող տնտեսական պայմանների շուրջ, անհրաժեշտության դեպքում առաջարկելով որոշակի արտոնյալ պայմաններ:

ՀՀ-ում վերը նշված գործընթացների ապահովման համար անհրաժեշտ է բազմազանեցնել, բարելավել տրանսպորտային ենթակառուցվածքները, արդիականացնել այս ոլորտում մատուցվող ծառայությունները: Քանի որ ՀՀ-ն ցամաքով շրջափակված, ծովային տարածքներ անմիջական ելք չունեցող երկիր է, և առևտուրը հիմնականում կախված է երրորդ երկրներից՝ Վրաստանից և Իրանից, ուստի առավել քան կարևորվում է ավտոճանապարհների վիճակի համապատասխանեցումը միջազգային չափանիշներին: Այս համատեքստում կարևորվում է նաև ՀՀ տնտեսական ինտեգրման ձևերի բազմազանեցումը՝ հատկապես ազատ առևտրի գոտիների ստեղծումը, որոնց շնորհիվ կապահովվեն իրացման նոր, գրավիչ շուկաներ:

АЙКАЗ ОГАНЕСЯН
ВАРСИК ТИГРАНЯН

ПУТИ ПРИВЛЕЧЕНИЯ ИНВЕСТИЦИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ключевые слова: *интеграционные процессы, валовое сбережение, внутренние инвестиции, прямые иностранные инвестиции, транснациональные корпорации, высокая эффективность, химическая промышленность*

Армения как страна с малой открытой экономикой, сильно зависит от мировой экономики. Внутренние источники финансирования инвестиций в Армении очень ограничены. В этом смысле возникновение новых экономических, политических, социокультурных отношений, благодаря разделению и перераспределению рынков между современной экономикой, создает предпосылки для новых интеграционных союзов. Мы считаем, что с целью привлечения дополнительных инвестиций, в ряде сфер, в том числе в химической промышленности может быть применена интеграция транснациональных корпораций в экономику Армении.

[1] https://dic.academic.ru/dic.nsf/ruwiki/203109

HAYKAZ HOVHANNISYAN
VARSIK TIGRANYAN

WAYS OF ATTRACTING INVESTMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

Key Words: *integration Processes, gross savings, domestic investment, foreign direct investment, transnational corporations, high efficiency, chemical industry*

Armenia, as a small open economy, depends heavily on the world economy. Internal sources of investment financing in Armenia are very limited. In this sense, the emergence of new economic, political, socio-cultural relations, thanks to the division and redistribution of markets between the modern economy, creates prerequisites for new integration unions. We believe that with the purpose of attracting additional investments, integration of transnational corporations into the Armenian economy can be applied in a number of spheres, including in the chemical industry.

ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ

ՏԱԹԵՎԻԿ ԱԶԱՏՅԱՆ
Կրտսեր գիտաշխատող, ՀՊՏՀ

ԴՐԱՄԱՅՆԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎՐԱ (ԵԱՏՄ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Հիմնաբառեր. *ԵԱՏՄ, դրամական ագրեգատներ, դրամայնացում, ՀՆԱ, Ազգային բանկ, առևտրային բանկեր, արժույթ, համակարգ,*

Սույն հոդվածի շրջանակներում փորձ է արվել ներկայացնելու ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսական իրավիճակի վրա դրամայնացման ազդեցությունը: Մասնավորապես՝ բացահայտվել են դրամավարկային քաղաքականության դերը և հիմնական ուղղությունները, դրամական միջավայրի կայունությունը և դրա ազդեցությունը մակրոտնտեսական ցուցանիշների վրա: Դիտարկվել է ԵԱՏՄ անդամ երկրների դրամավարկային քաղաքականությունը, բերվել են տվյալ երկրների դրամական ագրեգատների վերաբերյալ տվյալներ: Հաշվարկվել են վերջին տարիներին ԵԱՏՄ անդամ երկրների դրամայնացման մակարդակները, որոնք թույլ են տալիս համեմատել դրամական ագրեգատները և որոշել, թե որքան է դրամական հոսքերի ծավալի ապահովման աստիճանը ՀՆԱ իրացման համար:

Եվրասիական տնտեսական միությունը տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն է՝ օժտված միջազգային իրավասուբյեկտությամբ և հիմնադրված Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով, որը ստո-